

զուրբմտայ կեօրուլէ: Երթան դարձեալ նոր խօճայքն մուպաշիրով եւ առաւել յանդգնին առ Պալին, կուտասս զտասն՝ թէ վերցնենք ի Թէրսոսանէն, եւ նա կսկծեալ իբրեւ հանէ զպուլրուլթին ի ծոցոյն, ասէ մինն ի նոր խօճայիցն կոչեցեալ Շէրպէթճի՝ Զիմաուցի. Օյլէ հալվածի քեազըտի չօք վարտըր պէնըմ ճէպըմտէ. իսկ Պալին գոչէ թէ Շահրտ օլուն մուսլիմանլէր, եւ ըմբռնեալ Տաճիկք քարչեն ի փողոցն մղելով ի դուռն վէզիրին, եւ կէսք ի մազթանս անկեալ յիսուն զուռուչ ցրուեն վկայիցն եւ հազիւ յետս դարձուցանեն, որ պահեաց զերեսն աւուրք մի քանի, որ է փեսայ էսիլ թոռնուոյ: Զոմն զան հարեալ եւ երթայ տայ արզուհալ վէզիրին, որում պատասխանէ թէ Գնա՛ զքեզ ծեծելն հօճէթ արա՛ եւ բե՛ր զնոսս առաջի իմ. հազիւ տէՖ արարին: Զումեմն եւ զզուռաման շատ պահանջեալ քան զանցեալ ամսն, որ գոչէր թէ Ուսկիւֆըմ էվըմտէ ասըլը տըր: Սոցին նման եւ այլքն իմաստնագիւտ է մեծանձնութեանց ձերոց:

Ը. — Բազում են տաղտկութիւնք լսելեաց առ ի գարշութիւն համբաւոց անուամբ եւեթ ձեւացելոց առաջնորդաց¹⁾՝ ըստ ասից սրբազան առաքելոյն, Որք զանձինսն են ընծայեալք եւ ոչ թէ Տէր, եւ խոտան ըստ մարգարէին, զի յաւելի ընկալցին զգատաստան, որպէս Տէրն հրամայէ: Եւ զերանելի հայրդ մեր վասն անձանց իւրեանց խնդրեն ժամանակաւս առնել էպլէհլէր զազըսի, մանաւանդ, ասէ, գալ եւ պսակել թազիւ ճոխութեան եւ կարգաւ տեսչականաւ²⁾, ոչ բաւականացեալ զոր ունէրն եւ զոր գործեաց ամօք քսանիւք, այսինքն կրպօ կոչեցեալն գարչելի: Այլ զի պսակին աղազաւ հարսանիք մեծ հրատարակեսցի լընդհանուրս, եւ հայրդ սուրբ հարուլ յերկիր զգա-

1) յառաջնորդոց.

2) սեսուցչականաւ.